ԵՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՆԵՅՐՈԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ
ԷՊԻԼԵՊՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

EREBOUNI MEDICAL CENTER

«EREBOUNI» MEDICAL CENTER
NEUROLOGICAL CLINIC
REPUBLICAN EPILEPSY CENTER

Հեռախոս 474492

Erebouni Medical Center; Titogradyan 14, Yerevan 0087, Armenia

Phone (37410) 474492

Կոնսուլտատիվ եզրակացություն

Հիվանդը՝ Նաիրա Սուղյանը. 1984 թ.ծ., գտնվում է Երեբունի ԲԿ-ի նյարդաբանական բաժանմունքում ամբուլատոր հետազոտման և բուժման:

Գանգատները. Վերջույթների արտահայտված թուլություն, որը բերել է քայլելու, նստած դիրքից բարձրանալու, ֆիզիկական որևէ աշխատանք կատարելու զգալի դժվարության:

Հիվանդության անամնեզը. Իրեն հիվանդ է համարում դպրոցական տարիներից, երբ արտահայտվեց և աստիճանաբար զարգացավ վերը նշված թուլությունը: Որևէ բուժում այդ կապակցությամբ չի ստացել:

Օբյեկտիվ նյարդաբանական ստատուսում առկա է վերին և ստորին վերջույթների մկանային ուժի պակասում 3/5բալ և դիստալ, և պրոքսիմալ հատվածներում: Ջլային ռեֆլեքսները հավասարաչափ տորպիդ են, պաթոլոգիկ ռեֆլեքսներ չկան: Զգացողական խանգարումները հայտնաբերվում են հիպեսթեզիայի տեսքով պոլինեյրոպաթիկ ձևով:

Կատարվել է ԷՆՄԳ հետազոտություն, որը հայտնաբերել է արտահայտված դեմիելինիզացնող սենսոմոտոր պոլինեյրոպաթիա կոպիտ երկրորդային աքսոնալ ախտահարումով (մինչև 80%) վերին և ստորին վերջույթներում:

Ախտորոշումը. Շարկո-Մարիի հիվանդություն վերին և ստորին վերջույթների արտահայտված դեմիելինիզացնող սենսոմոտոր պոլինեյրոպաթիայով կոպիտ երկրորդային աքսոնալ ախտահարումով մինչև 80% հենաշարժիչ ֆունկցիայի խանգարումով:

Անցկացված բուժումը. Միլդրոնատ 5մլ մ/մ 10 օր, այնուհետև միլդրոնատ 500 մգ/օրը 1 ամիս, L-կառնիտին 500 մգ/օրը երկարատև, բուժական ֆիզկուլտուրա:

Հիվանդը կարիք ունի երկարատև հսկողության և բուժման:

Բժիշկ Կտեյան Ա.Ա.